ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 հոկտեմբերի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

136
(3167)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԲԱՆՏ՝ ԿՐԿՆԱԿԻ ՓԱԿ ՌԵԺԻՄՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթը բացառիկ մանրամասներ է պարզել՝ Փարաքար խոշորացված համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյանի սպանության աղմկահարույց քրեական գործի շրջանակում կալանավորված անձանց պահման պայմանների վերաբերյալ:

Ինչպես հայտնի է, այս գործով կալանավորվել են Նարեկ Օհանյանը եւ Գեւորգ Հարությունյանը: Սակայն «Ժողովուրդ»-ը իրավապահ համակարգին մոտ կանգնած իր աղբյուրներից պարզել է, որ նրանց պահման հարցը դարձել է լուրջ մարտահրավեր: Ըստ նույն աղբյուրների՝ կալանավորումից հետո փորձ է արվել տեղափոխել նրանց Արմավիրի քրեակատարողական հիմնարկ, սակայն այնտեղից փաստացի մերժում է ստացվել՝ անվտանգության նկատառումներից ելնելով:

Հիմնավոր վախեր կան, որ սիրված համայնքապետ Վալոդյա Գրիգորյանի սպանությունը կարող է դառնալ վրեժխնդրության պատճառ անգամ բանտի պատերից ներս: Իրավապահ համակարգը մտավախություն ունի, որ Գրիգորյանի կողմնակիցներից որեւէ մեկը գուցե ՔԿՀ-ում կապեր ունի եւ կարող է փորձել հաշվեհարդար տեսնել: Այս գործով, ի վերջո, խոսքը նաեւ վերաբերում է ոստիկանության օպերատիվ աշխատակից Կարեն Աբրահամյանի սպանությանը, ինչը միայն էլ ավելի է սրում իրավիճակը:

Այս ֆոնին իրավապահները որոշել են Նարեկ Օհանյանին եւ Գեւորգ Հարությունյանին տեղափոխել Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկ, որտեղ նրանք այժմ գտնվում են խիստ վերահսկվող կարանտինային պայմաններում: Մասնավորապես, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ նրանք գտնվում են կարանտինային հատուկ բաժանմունքում, որպեսզի ամբողջությամբ մեկուսացված լինեն մյուս կալանավորներից:

Հարկ է նշել, որ Վալոդյա Գրիգորյանը համարվում էր ազդեցիկ համայնքային գործիչ՝ բազմաթիվ հետեւորդներով: Նրա սպանությունը շոկ էր համայնքի համար, իսկ գործին առնչվող անձանց հանդեպ հասարակական վերաբերմունքը՝ ծայրաստիճան բացասական: Հենց այս հասարակական ֆոնն էլ ստիպել է իրավապահներին գործել ոչ ստանդարտ սցենարով՝ նախապատվություն տալով անվտանգության առավելագույն ապահովմանը, նույնիսկ եթե դա նշանակում է կալանավորներին ամբողջությամբ կտրել արտաքին աշխարհի եւ բանտային միջավայրի շփումներից:

«Ժողովուրդ» օրաթերթը հետեւում է այս գործով բոլոր զարգացումներին եւ առաջիկայում կներկայացնի նոր մանրամասներ, այդ թվում՝ նախաքննության առաջընթացից եւ հնարավոր մեղադրանքների շրջանակից:

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը վերջերս սկսել է հրապարակային, բայց դեռեւս տողատակերով քննադատել ՔՊ-ին տարբեր հարթակներում: Իր հարցազրույցներում անգամ նա անթաքույց ակնարկում է, թե գուցե ՔՊ-ին պետք չէր պատերազմական հանգամանքների ուսումնասիրությունը, ինչը միանշանակ արձագանքներ է առաջացնում թե՛ քաղաքական դաշտում, թե՛ ՔՊ-ի ներսում: «Ժողովուրդ» օրաթերթն արդեն հայտնել էր, որ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ԱԺ քննիչ հանձնաժողովի զեկույցը ԱԺ նախագահի որոշմամբ ուղարկվել է արխիվ: Ըստ ԱԺ կանոնակարգի՝ միայն հատուկ գաղտնիության թույլտվություն ունեցող պատգամավորներն են իրավունք ունենում ծանոթանալու այդ փաստաթղթին, քանի որ այն պարունակում է գաղտնի նյութեր: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ մինչ այս պահը որեւէ պատգամավոր չի դիմել ԱԺ գաղտնի բաժին՝ ծանոթանալու Անդրանիկ Քոչարյանի զեկույցին: Հիշեցնենք, որ Քոչարյանը դեռ 2021 թվականից ձեւավորել էր աշխատանքային խումբ՝ պատերազմի հանգամանքների ուսումնասիրման ուղղությամբ, սակայն արդյունքում բոլորից գաղտնի սկսեց աշխատել փորձագետների նեղ շրջանակի հետ՝ զեկույցը կազմելով առանց հանձնաժողովի մնացած անդամների ներգրավման: Նա հրաժարվեց զեկույցը տրամադրել հանձնաժողովի անդամներին՝ ծանոթանալու համար: Ավելի ուշ, երբ հանձնաժողովի ժամկետը, որն արդեն երկու անգամ երկարաձգվել էր, լրացավ 2023 թվականի մայիսի 3-ին, ԱԺ նախագահը հրաժարվեց այն քննարկման դնել ԱԺ լիագումար նիստում՝ նշելով կանոնակարգի խախտումը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ-ի ներսում զեկույցի ներկայացմանը դեմ է եղել նաեւ կուսակցության ծանր հրետանին՝ ԱԺ պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը: Արդյունքում՝ Անդրանիկ Քոչարյանի տարիների աշխատանքը եւ ժամկետանց զեկույցը ուղարկվեցին ԱԺ արխիվ՝ առանց քաղաքական գնահատականի, առանց քննարկման, առանց հետեւանքների:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Ի շխանական կուլիսներում վերջին օրերին բուռն քննարկման թեմա է դարձել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արփի Դավոյանի հանկարծակի քաղաքական ակտիվությունը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ ՔՊ վարչության վերջին նիստում Դավոյանը փորձել է նաեւ դուրս գալ հին քաղաքական խաղացողների դեմ՝ մասնավորապես բախվելով Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանին: Նա փորձել էր բարձրացնել Ավինյանի կոռուպցիոն բնույթի որոշ կապերի թեման, սակայն նրա փորձը հաջողությամբ չպսակվեց: Ավինյանի թիմը բավականին արագ հակազդեց, ինչի արդյունքում Դավոյանը ժամանակավորապես կորցրել է դիրքերը ՔՊ-ում: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ Դավոյանի «վերածնունդը» պատահական չէ: Նա, ով շուրջ մեկ տարի պահում էր քաղաքական լռություն՝ չունենալով ո՛չ հարցազրույց, ո՛չ ելույթ, անգամ՝ շփում վարչապետ Փաշինյանի հետ, այսօր ակտիվորեն մասնակցում է ՔՊ-ի ներսում ընթացող գործընթացներին: Սակայն վերջին շաբաթներին ՔՊ-ում իսկական զարմանք է առաջացրել Դավոյանի նոր գործիչ-իմիջը: Ըստ իշխանական շրջանակների՝ Դավոյանը փորձում է Նիկոլ Փաշինյանի ուշադրությունը վերստին գրավել, քանի որ հաջորդ ընտրություններում ՔՊ-ի ընտրացուցակում անցողիկ տեղ ունենալու խնդիր ունի:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Հ այաստանում վերջին շրջանում նկատվում է առաջին անհրաժեշտության ապրանքների՝ հատկապես հացի, մսի եւ կաթնամթերքի զգալի թանկացում: Գների աճը որոշ ապրանքների պարագայում հասել է մինչեւ 50 տոկոսի: Մասնագետները նման թանկացումները պայմանավորում են ոչ միայն ներքին շուկայում տիրող իրավիճակով, այլեւ դրամի փոխարժեքի անկմամբ, որը մեծ ազդեցություն է ունենում ներմուծվող ապրանքների գների վրա: «Ժողովուրդ» օրաթերթը, արձագանքելով քաղաքացիների ահազանգերին, ուսումնասիրել է Վիճակագրական կոմիտեի հրապարակած վերջին տվյալները, ըստ որոնց՝ 2025 թվականի սեպտեմբերին նկատվել է ինչպես սպառողական գների աճ, այնպես էլ դրամի որոշակի արժեզրկում: Մասնավորապես, 2025-ի սեպտեմբերին նախորդ ամսվա՝ օգոստոսի համեմատ, սպառողական գները աճել են 0.3%-ով, իսկ դրամի հաշվարկային փոխարժեքը նվազել է 0.1%-ով (այսինքն՝ դրամը մի փոքր արժեւորվել է): Միեւնույն ժամանակ, եթե համեմատենք 2025 թվականի սեպտեմբերը 2024-ի դեկտեմբերի հետ, ապա սպառողական գներն աճել են 1.1%-ով, իսկ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ նվազել է 3.5%-ով: Այսինքն՝ ընդհանուր առմամբ վերջին 9 ամիսներին Հայաստանը շարունակում է գնալ թանկացումների ճանապարհով, որն ուղեկցվում է դրամի արժեզրկմամբ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՀԱՐՑԵՐՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԵՆ, ՔԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ԱԶԱՏ ԳՅՈՒՂԻ ՀՐԴԵՀԻՑ ՇՈՒՐՋ 3 ՏԱՐԻ ԱՆՑ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Ազատ գյուղի հրդեհի գործով տուժողների լիազոր ներկայացուցիչ, փաստաբան Նորայր Նորիկյանի հետ:

-Պարոն Նորիկյան, հունվարին կլրանա Ազատ գյուղի հրդեհի գործով երրորդ տարին: Այս գրեթե երեք տարվա ընթացքում ի՞նչ առաջընթաց կա վարույթով: Մնում են մի շարք բաց հարցեր, մասնավորապես՝ ինչպես ստացվեց, որ զինծառայողները մահացան քնած վիճակում, եւ ինչպես է գնահատվում նրանց մահվան հանգամանքը:

-Եթե Հայաստանի իրավասու մարմինները՝ դատախազությունը, Քննչական կոմիտեն, ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների ծառայությունն ու մյուս պատկան կառույցները գործեին իրենց լիազորությունների շրջանակում, այսօր, ամենայն հավանականությամբ, նման հարց չէր առաջանա: Ինձ համար ակնհայտ է, որ դեպքի վայրը խախտվել է, եւ ոչնչացվել են ռազմավարական նշանակության հետքեր: Արդյունքում հնարավոր չէ հստակ պատասխանել՝ որտեղ է գտնվել զոհված զինծառայողների տեղակայման իրական վայրը:

Իհարկե, առանձին ներկայացուցիչներ մինչդատական վարույթում իրենց տված ցուցմունքում նկարագրել են զոհված զինծառայողների գտնվելու վայրը, դիրքը, բայց ամեն դեպքում դա պետք է կատարվեր համապատասխան դատավարական ընթացակարգերով, որը խախտվել է, անհետացվել են մի շարք կարեւոր հետքեր:

Հենց այս հանգամանքներից էլ ձեւավորվեց հանրային վստահության ճգնաժամը: Այս գործի շրջանակում հարյուրավոր մարդիկ են հարցաքննվել, որոնց ցուցմունքներում նկատվում են լուրջ հակասություններ՝ ոչ միայն մեկմեկու, այլեւ հենց իրենց նախորդ ցուցմունքների հետ համեմատած: Արդյունքում՝ պատասխանների փոխարեն հարցերն ավելի են շատանում:

Խնդիրն, ըստ էության, պարզ է. տեղի է ունեցել աննախադեպ հանցագործություն, եւ դրա վերաբերյալ առաջին իսկ օրվանից ասել ենք՝ իրականացվել է փնթի նախաքննություն: Այս արտահայտությամբ ես ոչ թե որեւէ անձի եմ վիրավորում, այլ խոսում եմ գործի նկատմամբ ընդհանուր մոտեցման մասին: Մինչ օրս խորքային վերլուծության չեն ենթարկվել բոլոր հնարավոր վարկածները, անգամ չեն հերքվել՝ հասարակության ու տուժողների մոտ վստահություն ձեւավորելու համար:

-Պարոն Նորիկյան, բացի բենզինի լցվելու վերաբերյալ իշխանության կողմից ներկայացված վարկածից, այլ վարկածներ քննվե՞լ են:

-Իրականում ընդամենը մեկ-երկու հարցում է արվել՝ առնչվող ՀՈՒ համապատասխան ստորաբաժանումներին՝ պարզելու, թե արդյոք եղել են հակառակորդի կողմից դիվերսիոն ներթափանցման փորձեր կամ պետական սահմանի հատման դեպքեր: Այդքանով էլ, կարելի է ասել, սահմանափակվել է այլ վարկածների ուսումնասիրությունը:

Ես դեռ երկու տարի առաջ փակ նամակ եմ հղել ԱԱԾ տնօրենին՝ խնդրելով պարզել, թե արդյոք այս գործով առկա է որեւէ օտարերկրյա ազդեցության հետք կամ կապ որեւէ պետության հետ, ինչպես նաեւ կան արդյոք նման վարկածով մեղադրյալներ: Ինձ պատասխանեցին, որ քննություն կիրականացվի, սակայն մինչ օրս տեղեկություն չկա՝ այն իրականում իրականացվե՞լ է, թե՞ ոչ:

Այս պահին քննությունը ընթանում է միայն պաշտոնական վարկածի շրջանակում: Առջեւում կարեւոր փուլ է սպասվում՝ պետք է հարցաքննվեն փորձագետները, ապա՝ մեղադրյալները: Ես որոշակի հույսեր ունեմ, որ նրանց հարցաքննությունը կարող է լույս սփռել գործի մի շարք մութ կետերի վրա:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ
Հարցազրույցն ամբողջությամբ՝
ArmLur.am կայքում

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԿԱՆՏԵՍԵ՞Ն ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԸ

Ամենացածր ձայներով Երեւանում քաղաքապետ ընտրված Տիգրան Ավինյանը սկսել է հերթական խստացման քաղաքականությունը մայրաքաղաքում՝ այս անգամ մտադիր լինելով առանց զիջման պայքարել վարչական շրջաններում առկա ապօրինի շինությունների դեմ:

Քաղաքապետարանից «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցած տեղեկության համաձայն՝ այս պահին Ավինյանի գլխավոր թիրախը Գնունու շուկան է, որը պետք է ամբողջությամբ «մաքրվի»՝ անտեսելով անգամ դատական որոշումները: Սակայն այստեղ խնդիրներն ավելի խորքային են: Բանն այն է, որ քաղաքապետարանի համար «ապօրինի» համարվող շինությունների մի մասն իրականում ունեն որոշ օրինական փաստաթղթեր: Հատկապես, երբ խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ սեփականատերերը դատական կարգով արդեն իսկ հաղթել են քաղաքապետարանին: Մեր աղբյուրները հիշեցնում են Նոր Նորք վարչական շրջանում գտնվող, Գյուրջյանի շինության մասին, որը երկու եղբայրների սեփականությունն է, եւ որը նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի հրամանով քանդվել էր. հետագայում, դատարանում հաղթելուց հետո, եղբայրները ոչ միայն վերականգնեցին շինությունը, այլեւ կառուցեցին ավելի մեծը՝ ստանալով փոխհատուցումներ:

Սակայն Ավինյանը, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների, իր թիմին հորդորել է չգնալ որեւէ զիջման, նույնիսկ եթե դա նշանակում է անտեսել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումները:

Այլ կերպ ասած՝ թիմակիցներին ուղղված հրահանգն այն է, որ անհրաժեշտության դեպքում պետք է մերժել դատավճիռները, չկատարել դատարանի որոշումները, եւ եթե հարկ լինի նույնիսկ քրեահրավական դաշտ մտնել:

Սա Նիկոլ Փաշինյանի իշխանության համար ապօրինության նոր նշաձող է, քանի որ, ՀՀ օրենսդրության համաձայն, դատարանի որոշումը չկատարելը ոչ միայն վարչական խախտում է, այլեւ քրեական հանցագործություն: Մեր աղբյուրների պնդմամբ, Տիգրան Ավինյանը փաստացի պատրաստ է իր աշխատակազմի անդամներին մղել դեպի ապօրինություն, միայն թե իր քաղաքական օրակարգը առաջ տանի:

Հիշեցնենք՝ նախկինում քաղաքապետարանն արդեն մի քանի դեպքերում պարտվել է դատարաններում, ինչը հանգեցրել է բյուջեից մեծ փողերի վճարման: Հիմա Ավինյանը, ըստ ամենայնի, որոշել է գնալ հակառակ ուղղությամբ. փոխանակ ընդունի սխալներն ու գործի իրավական դաշտում՝ փորձելու է լուծել հարցերը վարչական ճնշմամբ:

ՄԱԿՐՈՆԻՆ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏԱԼ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հայտնվել է աճող ճնշման ներքո՝ կամ հրաժարական տալու, կամ արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու պահանջով՝ մի երկրում, որտեղ վերջին երկու տարվա ընթացքում արդեն հինգ վարչապետ է հրաժարական տվել:

47-ամյա կենտրոնամետ նախագահը, ում երկրորդ ժամկետը ավարտվում է 2027 թվականին, բազմիցս հայտարարել է, որ մտադիր չէ հրաժարական տալ: Սակայն վերջին շրջանում այդ պահանջը դարձել է լայն քննարկման առարկա: Ֆրանսիայի նախկին վարչապետ Էդուար Ֆիլիպը, ով գլխավոր թեկնածուներից է համարվում ապագա նախագահական ընտրություններում, «RTL» ռադիոյին տված հարցազրույցում հայտարարել է, որ ժամանակն է, որ Մակրոնը «կարգավորված ձեւով հեռանա»՝ թույլ տալով, որ երկիրը ճգնաժամից դուրս գա:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ 2026-Ի ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մենք որոշում չունենք, զբաղված ենք այլ գործով», - այս մասին, դատարանի բակում ասել է Հայաստանի Հանրապետության երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը՝ լրագրողների հետ զրույցում:

«Ես հաջողություն եմ մաղթում բոլոր այն ուժերին, ովքեր արդեն որոշել են մասնակցել 2026 թվականի ընտրություններին: Մենք որոշում չունենք, մենք զբաղված ենք այլ գործով: Երբ մեր կարծիքով դրա ժամանակը գա, մենք մեր որոշումը կհայտնենք», - ասել է Սերժ Սարգսյանը:

Հիշեցնենք՝ 2026 թվականի ամռանը Հայաստանում սպասվում են հերթական խորհրդարանական ընտրություններ, որին մասնակցության համար նոր ուժեր են ձեւավորվում եւ ընտրապայքարի մեջ մտնում:

ՄԵՐԺՈՒՄ ԵՆ ԱՐԱՐԱՏԸ, ԲԱՅՑ «ԱՐԱՐԱՏ» ԿՈՆՅԱԿ ԳՆՈՒՄ ԵՆ

Կառավարության որոշմամբ 2025 թվականի նոյեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետություն մուտքի կամ ելքի սահմանահատման կնիքի վրա այլեւս չի լինելու Արարատ լեռան պատկերը, չեն լինելու նաեւ այլ տեղեկություններ՝ բացառությամբ սահմանահատման վերաբերյալ տեղեկությունները: Արարատի հանդեպ «թշնամանքը» սկսվեց տարիներ առաջ, երբ խոսվում էր զինանշանից այն հեռացնելու մասին:

Մինչ իշխանությունը դատարկ ձեռքերով մենամարտում է Արարատի հետ, Կառավարության կազմը գնում ու գնում է «Արարատ» կոնյակ՝ տարբեր տեսակների:

Օրինակ՝ էկոնոմիկայի նախարարությունը 82 հազար 540 դրամ արժեքով կոնյակներ է գնել՝ 20 տարեկան, 2 շիշ, «Արարատ» «Նաիրի», որի մեկ հատի արժեքը 33 հազար 291 դրամ է եղել:

Հաջորդը Հայաստանի Հանրապետության Դատախազությունն է, որը հաճախ է նվերներ գնում: Վերջին ամիսներին Դատախազությունը գնել է 1,5 մլն դրամ արժեքով հուշանվեր կոնյակներ: Եթե առանձնացնենք, ապա կտեսնենք, որ Դատախազությունը գնել է 272 հազար դրամ արժեքով 8 «Նաիրի» հուշանվեր կոնյակ:

Այս գնումների շարքում հայտնվել է նաեւ Ազգային ժողովը, որը այս տարեսկզբին ձեռք է բերել 7 մլն 554 հազար դրամ արժեքով կոնյակներ ներկայացուցչական ծառայությունների համար:

Այսպիսով՝ Ազգային ժողովը գնել է 10 «Արարատ Շառլ Ազնավուր» կոնյակ, 36 «Արարատ Վասպուրական» կոնյակ, 120 «Արարատ Նաիրի» կոնյակ, 10 «Արարատ Էրեբունի» կոնյակ, որի մեկ շշի արժեքը 175 հազար դրամ է:

Ստացվում է, որ իշխանությունները մերժում են Արարատը, մենամարտում պատկերի հետ, սակայն անգամ հուշանվերներ գնելիս նախապատվությունը տրվում է «Արարատ» կոնյակին:

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հեռախոսազանգով շնորհավորել է Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինին ծննդյան օրվա կապակցությամբ: Պետությունների ղեկավարները քննարկել են երկկողմ հարաբերությունների զարգացումը, հայտնում է ադրբեջանական առաջնորդի մամուլի ծառայությունը:

«Նախագահ Ալիեւը զանգահարել է Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինին: Ադրբեջանի նախագահը շնորհավորել է ռուսաստանցի գործընկերոջը ծննդյան օրվա կապակցությամբ: Վլադիմիր Պուտինը շնորհակալություն է հայտնել շնորհավորանքի համար: Հեռախոսազրույցի ընթացքում տեղի է ունեցել կարծիքների փոխանակում Ադրբեջանի եւ Ռուսաստանի միջեւ հարաբերությունների ներկա վիճակի եւ զարգացման հեռանկարների վերաբերյալ», - նշված է հաղորդագրությունում:

ՎՃԱՐՈՎԻ ԱՌՅԱՆՑ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին դատապարտել է Իսրայելի ռեժիմի կողմից վճարովի առցանց օգտահաշիվների օգտագործումը՝ առցանց Իսրայելամետ պատմություններ տարածելու համար՝ մեջբերելով այն հաղորդագրությունները, որ սոցիալական ցանցերի ներկայացուցիչները Թել Ավիվի համակարգված թվային արշավի շրջանակներում հազարավոր դոլարներ են ստանում յուրաքանչյուր գրառման համար:

«Մենք մարդկանց չենք վճարում սոցիալական ցանցերում ստելու համար: Ահա թե ինչ է անում Իսրայելը», - երկուշաբթի երեկոյան իր X էջում գրառման մեջ ասել է Արաղչին:

Իրանի արտաքին գործերի նախարարը նաեւ կցել է լուսանկար, որտեղ պատկերված է Նիք Քլիվլենդ-Սթաուութի սեպտեմբերի 30-ին հրապարակված հոդվածի վերնագիրը՝ «Ինֆլուենսերներին 7 հազար դոլար են վճարում յուրաքանչյուր գրառման համար՝ իսրայելամետ սոցիալական ցանցերում բովանդակությունը խթանելու համար»:

Հոդվածում ասվում է, որ իսրայելական ռեժիմի կողմից սոցիալական ցանցերում գրառումներ անելը շատ եկամտաբեր է, հավելելով, որ այս ազդեցիկ անձինք, հավանաբար, Իսրայելի անունից ստանում են մոտ 7000 դոլար սոցիալական ցանցերում, ինչպիսիք են TikTok-ը եւ Instagram-ը, յուրաքանչյուր գրառման համար:

ԼԱՎՐՈՎԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ Ռուսաստանի համար բացարձակապես անընդունելի է Աֆղանստանում կամ դրան սահմանակից պետությունների տարածքում երրորդ երկրների ռազմական ենթակառուցվածքների տեղակայումը: Այս մասին նա նշել է Մոսկովյան ձեւաչափով Աֆղանստանի հարցով յոթերորդ խորհրդակցական հանդիպման ժամանակ իր բացման խոսքում:

2000 ԴՈԼԱՐ՝ ԳԻՆՈՒ ԱՆՈԹԻ ԵՎ ԾԱՂԿԱՄԱՆԻ ՀԱՄԱՐ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՆՎԵՐԸ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Նիկոլ Փաշինյանը հանդիպել էր Չինաստանի նախագահ Սի Ծինփինին, ով էլ Փաշինյանին նվիրել էր «Միասին խաղաղության համար» վերնագիրը կրող էմալապատ անոթ՝ զուն: Զունը հին չինական ավանդական գինու անոթ է՝ պատրաստված կլուազոնե եւ հին փորագրության տեխնիկայով: Գինու անթոը ղղնձյա է: Այն արժեցել է 403 հազար 820 դրամ:

Բացի գինու անոթից, Սի Ծինփինը Նիկոլ Փաշինյանին նվիրել է նաեւ «Խաղաղություն եւ ներդաշնակություն» անվանումը կրող ծաղկաման: Այն պատված է կլուազոնե էմալով եւ փայտի եւ մետաղի փորագրության տեխնիկայով: Ծաղկամանն արժեցել է մոտ 370 հազար 550 դրամ:

Ստացվում է, որ Չինաստանի նախագահը մոտ 2 հազար դոլարի 780 հազար դրամի նվերներ է շռայլել Նիկոլ Փաշինյանին:

Հիշեցնենք, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածում, որով սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները, նշվում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին թույլատրվում է ընդունել միայն հետեւյալ նվերները.

1. պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաեւ աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը

2. ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը

3. կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով եւ նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով.

4. օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:

Եթե 1-ին կամ 4-րդ կետերով նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է 60.000 դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը կամ համայնքին:

Բացի այդ, հանրային պաշտոն զբաղեցնող անձը եւ հանրային ծառայողը պարտավոր են իրենց կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառեն նվերների հաշվառման ռեեստրում:

40.000 դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման, բացառությամբ նույն աղբյուրից 6 ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (5 եւ ավելի) բնույթ կրող դեպքերի:

Նվերների արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական արժեքը, որը հնարավոր է գնահատել բաց աղբյուրների միջոցով:

Հավելենք նաեւ, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին, եթե որեւէ նվեր է տրվում իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացմանն առնչվող, ապա անկախ դրա չափից, գնից, եթե անգամ այն արժե 100 դրամ, չեն կարող ընդունել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲԱՅՐԱՄՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը պետք է իր Սահմանադրությունից հեռացնի Ադրբեջանի նկատմամբ պահանջները, հայտարարել է Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը:

«Օգոստոսի 8-ին ԱՄՆ-ում կայացած գագաթնաժողովը եւ ստորագրված փաստաթղթերը պատմական նշանակություն ունեն: Այս պատմական հնարավորությունը պատշաճ կերպով գնահատելու եւ խաղաղության պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է, որ Հայաստանը վերացնի Ադրբեջանի նկատմամբ իր տարածքային պահանջները, որոնք ամրագրված են Սահմանադրությամբ»,- նշել է նա:

Հայաստանի, Ադրբեջանի եւ Միացյալ Նահանգների ղեկավարների Վաշինգտոնյան հանդիպումն ու ստորագրված փաստաթղթերը պատմական նշանակություն ունեն. տարածաշրջանային խաղաղությունն ու կայունությունը պետք է ծառայեն ժողովուրդների բարեկեցությանն ու առաջընթացին:

Իր ելույթում նշել է Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը:

«Տասնամյակներ շարունակված հակամարտության կարգավորման գործընթացի ուղղությամբ Ադրբեջանի հետեւողական ջանքերն ու նպատակաուղղված գործողություններն ուղղված են մեր տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատմանը»,- ասել է դիվանագետը:

Նա հավելել է, որ տարածաշրջանում համագործակցության կայունության համար անհրաժեշտ է ամրապնդել նաեւ տնտեսական կապերը: Բայրամովի խոսքով՝ Ադրբեջանը հետեւողական ջանքեր է գործադրում «Միջին միջանցքի» ակտիվացման համար: TRIPP ուղու մասին Բայրամովը կարծիք է հայտնել, որ այն կարեւոր քայլ է տարածաշրջանային հաղորդակցությունը դիվերսիֆիկացնելու ուղղությամբ:

ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԳՐԱՌՈՒՄԸ

ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը հրապարակում է արել. «Ընտրովի արդարադատություն եւ քաղաքական վենդետա:

Խուլիգանական վարք դրսեւորած ՔՊ պատգամավորները ԱԺ նիստերի դահլիճում ծեծում, հայհոյում են ու մնում անպատիժ, իսկ նույն վարքը դրսեւորած զինվորի հարազատը հայտնվեց բանտում:

Այսօր առավոտյան հայտնի դարձավ (07.10.2025 - խմբ.), որ մեկ ամսով կալանավորել են 44-օրյա պատերազմում անհետ կորած զինվորի հորեղբորը՝ ակտիվ պահանջատեր Արսեն Ղուկասյանին:

Մարդը, որ տարիներով պայքարում է արդարության ու ճշմարտության համար, այսօր հայտնվել է բանտում՝ ՊՆ-ի դիմաց բողոքի ակցիայի ժամանակ տեղի ունեցած քաշքշուկի համար:

Սա ոչ թե արդարադատություն է, այլ իրապես քաղաքական վենդետա ընդդեմ պահանջատեր քաղաքացու: Փոխանակ 5 տարի անց անհետ կորածներին որոնեն, լուր տան հարազատներին, բանտարկում են: #ԻրականՀայաստան»,- ասված է հրապարակման մեջ, որին կից նաեւ լուսանկար կա:

ԻՆՉ ԵՂԱՆԱԿ Է ՍՊԱՍՎՈՒՄ

Առաջիկա օրերին օդի ջերմաստիճանը աստիճանաբար կբարձրանա եւս 2-3 աստիճանով:Հոկտեմբերի 8-11-ը սպասվում է առանց տեղումների եղանակ:

Քամին՝հարավ-արեւմտյան՝2-5 մ/վ, հոկտեմբերի 8-10-ն առանձին շրջաններում սպասվում է քամու ուժգնացում՝ 15-18 մ/վ արագությամբ:

Օդի ջերմաստիճանը հոկտեմբերի 8-ին աստիճանաբար կբարձրանա եւս 2-3 աստիճանով:

ԿԱՇԱՌՔ՝ ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հիման վրա նախաձեռնված քրեական վարույթով հիմնավորվել է, որ առեւտրային կազմակերպության տնօրենը ինչպես անձամբ, այնպես էլ խմբի կազմում, իր օգտին ապօրինի գործողություններ կատարելու դիմաց կաշառք է տվել տարբեր պաշտոնատար անձանց:

Մասնավորապես՝ առեւտրային կազմակերպության տնօրենը, գործելով խմբի կազմում, Երեւան քաղաքում կառուցվող շինության գազամատակարարման աշխատանքների իրականացման ժամկետանց տեխնիկական պայմանների հետ կապված խնդիրները կարգավորելու եւ անհրաժեշտ փաստաթղթերին ընթացք տալու համար 2024թ. ընթացքում Երեւանի քաղաքապետարանի պաշտոնատար անձին տվել է 2 մլն ՀՀ դրամ կաշառք: Բացի այդ, իր ընկերության միջոցով եւս 5 տարբեր հասցեներում կատարված թերի աշխատանքների ու շահագործման վերաբերյալ համապատասխան թույլտվություններ տալու համար 2024 թվականին ընդհանուր շուրջ 500.000 ՀՀ դրամ կաշառք է տվել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի պաշտոնատար անձանց:

Նախաքննությամբ բացահայտվել են նաեւ 2024թ. հոկտեմբերին նշված կազմակերպության տնօրենի կողմից առեւտրային կազմակերպությունների աշխատակիցներին ընդհանուր 300.000 ՀՀ դրամ կաշառք տալու դեպքեր՝ պետության կարիքների համար գազաբաշխիչ կայանի կառուցմանը վերաբերող համապատասխան փաստաթղթերը կեղծելու եւ դրանցում աշխատանքներն ավարտված լինելու մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ ներառելու համար: Բացի այդ, կազմակերպության տնօրենը համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ իրականացնելու եւ ապօրինի կոյուղատար կառուցելու պայմաններում իրեն վարչական պատասխանատվության չենթարկելու համար 2024թ. ընթացքում 400.000 ՀՀ դրամ կաշառք է տվել Երեւանի քաղաքապետարանի պաշտոնյաներին:

Պարզվել է նաեւ, որ 2025թ. հունվարին նշված կազմակերպության տնօրենն այլ անձի հետ նախնական համաձայնությամբ ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության պաշտոնյային առաջարկել է կաշառք տալ՝ առանց օրենքով սահմանված հիմքերի առկայության իր մատնանշած անձին պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու գործընթացը կազմակերպելու համար:

Քրեական վարույթի շրջանակում բացահատվել է նաեւ ՀՀ ՆԳՆ կարիքների համար հայտարարվելիք մրցույթներին նույն անձին պատկանող ընկերության՝ հաղթող ճանաչվելու գործընթացն ապահովելու եւ դրա դիմաց ստացվելիք եկամուտից ՆԳՆ պաշտոնյային կաշառք տալու վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու դեպք:

Վերը նշված հանցավոր արարքների կատարման համար առեւտրային կազմակերպության տնօրենին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ), 436-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (2 դրվագ), 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (5 դրվագ) եւ 437-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, որը հետագայում փոխարինվել է տնային կալանքով եւ գրավով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Հակակոռուպցիոն կոմիտե

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Հոկտեմբերի 6-7-ը ՀՀ-ում բացահայտվել է 122 հանցագործություն, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես՝

- 21 դեպք՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու,
- 14-ական դեպք՝ ֆիզիկական ներգործության, թմրանյութի հայտնաբերման,
- 10 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության,
- 7 դեպք՝ հոգեկան ներգործության,
- 6 դեպք՝ խարդախության,
- 5 դեպք՝ սառը զենքի հայտնաբերման,
- 4-ական դեպք՝ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու, փաստաթղթի կեղծիքի,
- 2-ական դեպք՝ խուլիգանության, թմրանյութի իրացման, ինքնիրավչության:

Բացահայտվել են նաեւ բնակարանային գողության, դրամանենգության, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու, հետամտելու, սուտ մատնության, ընդերքի պահպանման կամ օգտագործման պահանջները խախտելու եւ այլ դեպքեր:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է՝

- 2 դեպք՝ բնակարանային գողության,
- 1-ական դեպք՝ գույքը ոչնչացնելու կամ վնասելու, խարդախության, կողոպուտի:

ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔ

Հոկտեմբերի 1-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանի Մանուկ Աբեղյանի անվան թիվ 3 ավագ դպրոցում:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, այդ օրը՝ ժամը 14:50-ի սահմաններում «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն է տեղափոխվել մի երեխա՝ «ճակատոսկրի կոտրվածք» ախտորոշմամբ

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց է մեկնել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնականի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Երվանդ Նիկոյանի գլխավորությամբ:

Արդեն հիվանդանոցում բժիշկները ոստիկաններին հայտնել են, որ վիրավորը գտնվում է վիրահատարանում եւ ի վիճակի չէ այդ պահին դեպքի մասին տեղեկություններ հայտնել:

Կենտրոնականի ոստիկանները պարզել են, որ վիրավորը Երեւանի բնակիչ 15-ամյա տղա է, իսկ նրա հարազատները հայտնել են, որ նա Մանուկ Աբեղյանի անվան թիվ 3 ավագ դպրոցում գլուխը պատահաբար հարվածել է դռանը, ինչի հետեւանքով վնասվածք է ստացել:

Ոստիկանները, սակայն, ձեռնարկելով անհրաժեշտ օպերատիվ միջոցառումներ, պարզել են, որ ծնողների հայտնած տեղեկությունը իրականությանը չի համապատասխանում:

Այդ օրը դպրոցում հիվանդանոց տեղափոխված երեխայի եւ նրա հասակակից համադասարանցի տղայի միջեւ տեղի է ունեցել վիճաբանություն, որի ընթացքում հիվանդանոց տեղափոխված երեխան հարված է ստացել գլխի հատվածում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆԸ՝ ՄԵՐՁԱՎԱՆԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ArmLur.am-ը Փարաքար խոշորացված համայնքից տեղեկություններ հրապարակեց, որ մի խումբ բնակիչներ հավաքվել են եւ փորձել խոչընդոտել ՔՊ-ական ավագանու անդամ Դավիթ Ախտոյանի երեխաների մուտքը դպրոց: Բանն այն է, որ մեկ շաբաթից ավելի է նրանց երեխաները դպրոց չեն գնում:

ArmLur.am-ին երեկ՝ հոկտեմբերի 7-ին, հաջողվեց կապ հաստատել ՔՊ ավագանու անդամ Դավիթ Ախտոյանի հետ՝ պարզելու, թե ինչ է իրականում եղել:

«Ես չգիտեմ, թե բնակիչները ինչ են արել, ինչ են պլանավորել, բայց մի բան հստակ կարող եմ ասել. իմ կինը երեխաներին դպրոց չի տարել ու իրականությանը չի համապատասխանում այն տեղեկությունը, որ նրանց թույլ չեն տվել դպրոց մտնել: Նրանք առհասարակ դպրոց չեն գնացել: Ոչ ոք չի կարող իմ երեխաներին թիրախավորել եւ, առհասարակ, նրանց մուտքը դպրոց արգելել»:

Հարցին, թե ճիշտ են արդյոք տեղեկությունները, որ իր ընտանիքի անվտանգությունը ապահովելու համար Մերձավանից հեռացրել է նրանց, Ախտոյանը պատասխանեց. «Այո, իրավապահների հորդորով ժամանակավոր հեռացել ենք Մերձավանից. մնացածը ժամանակը ցույց կտա»:

ArmLur.am-ը հետաքրքրվեց նաեւ, թե արդյոք իր եղբոր՝ Մերձավանի նախկին ղեկավար Միհր Ախտոյանի մասին որեւէ ասելիք ունի:

«Ես այս պահին զերծ կմնամ որեւէ բան ասելուց, նախաքննություն է ընթանում, եւ իրավապահները ճիշտը կպարզեն: Այլ բան չեմ կարող ավելացնել»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ դատարանը որոշել է, որ Վարդան Հարությունյանը կշարունակի մեկ ամսով մնալ կալանքի տակ:

Ավելի վաղ հայտնել էինք, որ Հակակոռուպցիոն կոմիտեն դիմել է դատարան՝ պետական եկամուտների կոմիտեի նախկին նախագահ Վարդան Հարությունյանի նկատմամբ կիրառված երկամսյա կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությամբ: Մեր տեղեկություններով՝ նախաքննական մարմինը դատարանում կքննի այս հարցը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Քրեական ոստիկանության Սյունիքի մարզային վարչության եւ Համայնքային ոստիկանության Գորիսի բաժնի ծառայողները հոկտեմբերի 6-ին համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզել են, որ Տեղ գյուղի 51-ամյա բնակիչը նկուղում պահում է մարիխուանա տեսակի թմրամիջոց, որը պատրաստել է տնամերձ այգում աճեցրած կանեփի թփերից:

Կազմված փաստաթղթերը փոխանցվել են Գորիսի քննչական բաժին: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ 51-ամյա տղամարդու նկուղում հայտնաբերվել է 2096 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող զանգված:

Կատարվում է նախաքննություն:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 6-ից 7-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 122 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԵՐԵՎԱՆՑԻՆԵՐԸ «ԳՐԱՎԵԼ ԵՆ» ԴԻԼԻՋԱՆԸ

Երեւանի բնակիչները վերջին տարիներին Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում ու Դիլիջան համայնքի գյուղերում բազում տներ ու հողեր են գնել: Այդ գործընթացը նախկինում էլ կար, սակայն վերջին տարիներին է մեծ թափ առել:

Դիլիջանում թաղամասեր կան, որտեղ բնիկ դիլիջանցիները չեն ճանաչում իրենց հարեւանությամբ տներ գնած բազում երեւանցիներին, նրանց հետ շատ չեն շփվում:

Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանի օրոք՝ 2021-2025 թվականներին, կասկածելի աճուրդներով, շուկայականից բազում անգամ ցածր գներով Երեւանի, Հայաստանի այլ բնակավայրերի բնակիչները Դիլիջան համայնքում կառուցապատման համար հողամասեր են ձեռք բերել, եւ դա այն պարագայում, որ համայնքապետ Դավիթ Սարգսյանը առանձնատուն կամ հասարակական օբյեկտ կառուցելու ցանկություն ունեցող դիլիջանցիներին ասում է՝ Դիլիջանում ազատ հողեր չկան:

ԾՐԱԳՐԵՐԸ ՉԳՁԳՎՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել. «Տավուշի մարզպետի կողմից ստեղծված սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման հանձնաժողովը 2024 եւ 2025 թվականներին մարզում քանի՞ սուբվենցիոն ծրագիր է մշտադիտարկել, դրանցից քանիսո՞ւմ են խախտվել իրականացման ժամկետները, որո՞նք են այդ ծրագրերը»:

Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզի՝ 2024-2025 թվականներին հաստատված եւ սկսված բոլոր սուբվենցիոն ծրագրերը պարբերաբար մշտադիտարկվել են մարզպետի կողմից ստեղծված սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման հանձնաժողովի կողմից: Սուբվենցիոն ծրագրերի պատվիրատուներ են հանդիսանում համայնքները, ուստի դրանց մասին այլ տեղեկություններ իմանալու նպատակով առաջարկում ենք դիմել համապատասխան համայնքապետարան»:

Սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման համար մարզպետի կողմից ստեղծված հանձնաժողով է գործում, ինչո՞ւ է մարզպետն առաջարկում հետաձգված ծրագրերի մասին տեղեկության համար դիմել համայնքներին. հանրությունից, լրագրողից նա ինչո՞ւ է թաքցնում այդ տեղեկությունը:

ՎԱՏ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզում գյուղացիները սովորություն ունեն հրդեհել հնձած արտերը՝կարծելով, որ այդ կերպ այդ հողատարածքից հաջորդ տարի լավ բերք են ստանալու: Վառված դաշտերը ամենեւին էլ հաջորդ տարվա լավ բերքի գրավականը չեն: Բարձր ջերմաստիճանի, քամու պայմաններում հրդեհներն ընդգրկում են նոր տարածքներ, դառնում անվերահսկելի: Այդպիսի մեծ հրդեհներ ամեն տարի լինում են, սակայն գյուղացիները դրանցից դասեր չեն քաղում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

TEAM-Ը՝ «ԴԻՋԻԹԵՔ»-Ի 5G ԳՈՐԾԸՆԿԵՐ

ՏԱՐՎԱ ԱՄԵՆԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

Հոկտեմբերի 10-12-ը Երեւանում կանցկացվի Հայաստանի խոշորագույն տեխնոլոգիական միջոցառումը՝ «Դիջիթեք 2025»-ը: Team-ը, ավանդաբար լինելով ամենամասշտաբային տեխնոլոգիական միջոցառման կողմին, այս տարի հոբելյանական՝ 20-րդ անգամ անցկացվող «Դիջիթեք»-ի 5G գործընկերն է:

«Մերիդիան» էքսպո կենտրոնում կայանալիք տեխնոլոգիական ցուցահանդեսի, կոնֆերանսի ու փառատոնի ձեւաչափով անցկացվող միջոցառման կազմակերպիչը Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունն է: Միջոցառումն այս տարի 3 օրերի ընթացքում կիյուրընկալի նախնական գրանցում անցած շուրջ 40 000 այցելուի՝ «Դիջիթեքը» դարձնելով ոչ միայն Հայաստանի, այլեւ տարածաշրջանի միջոցառումներից ամենազանգվածայինը:

Team Telecom Armenia-ից բացի «Դիջիթեք»-ին մասնակցում են նաեւ Team ընկերությունների խմբի Team Solutions, Team Systems, Buy.am, Team Pay ընկերությունները՝միջոցառմանը ներկայանալով Team Beyond Limits (Team-ը՝ սահմաններից դուրս) կարգախոսով:

«Team-ը՝ որպես խոշորագույն տեխնոլոգիական ընկերությունների խումբ, չի կարող անմասն մնալ այս տեխնոլոգիական մեծամասշտաբ տոնից: Այդ է պատճառը, որ տարիներ շարունակ «Դիջիթեք»-ի կողքին ենք թե՛ որպես մասնակից, թե՛ որպես աջակից: Այս տարիների ընթացքում էլ ակնառու է հայկական տեխնոլոգիական ընկերությունների շեշտակի առաջընթացն ու նորարարությունների հաստատումը մեր երկրում: Սա էլ ավելի նշանակալի է դարձնում այս փառատոնը՝ մեկտեղելով հայկական տեխնոլոգիական միտքն ու նախաձեռնությունները՝ այդպիսիով շփման ու փորձի փոխանակման լայն հարթակ դառնալով բոլորիս համար»,-ասում է Team ընկերությունների խմբի համահիմնադիր Հայկ Եսայանը:

«Այս տարվա «Դիջիթեք»-ը հիրավի աննախադեպ է: Առաջին անգամ այն անցկացվելու է 3 օր ու գիշեր անընդմեջ: Ցերեկը ավանդական տեխնոլոգիական ցուցահանդեսն ու կոնֆերանսն են, իսկ գիշերը՝ փառատոն՝ գերհագեցած մշակութային ծրագրով: «Դիջիթեք»-ը, ինչպես հայտնի է, արդեն վաղուց տեխնոլոգիական հայության Ամանորն է: Տեխնոլոգիական տարիները մեր երկրում սկսվում եւ ամփոփվում են «Դիջիթեք»-ով, եւ այս 20-րդ հոբելյանականը, վստահ եմ, գերազանցելու է բոլոր սպասելիքները: Այս երեք օրերին Երեւանը դառնալու է տեխնոլոգիական աշխարհի կենտրոնը: Տոկիոյից մինչեւ Սան Ֆրանցիսկո, Բոստոն, Նյու Յորք, Փարիզ, Սիդնեյ. բոլոր քաղաքներից ունենք բանախոսներ, ներկայացուցիչներ, պատվիրակություններ: Եվ շատ ուրախ ենք, որ մեր ավանդական գործընկերը՝ Team-ը, կրկին մեզ հետ է այս տարի՝որպես 5G գործընկեր»,- ասում է Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության տնօրեն Սարգիս Կարապետյանը:

Եռօրյա փառատոնին Team ընկերությունների խմբի տաղավարներում այցելուներին սպասում են տարատեսակ խաղային հատվածներն ու բազմաթիվ անակնկալները: Team Telecom Armenia-ի տաղավարում այցելուները հնարավորություն կունենան խաղալու, ծանոթանալու ընկերության նոր առաջարկներին, տեխնոլոգիական նորարարական լուծումներին ու Team TV-ի նոր ձեւաչափին: Team Systems-ի տաղավարում այցելուները կգտնեն խելացի տան ինտեգրված լուծումներ, դիզայներական հեռուստացույցներ, ինչպես նաեւ մի շարք նորարարական ինժեներական նախագծեր, որոնք ընդգրկում են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման լայն ոլորտներում: TeamPay-ը «Դիջիթեք»-ում կներկայացնի իր նոր թվային քարտը, նախատեսվում են մրցույթներ ու տարբեր մրցանակներ: Team Solutions-ի տաղավարի այցելուները կկարողանան ծանոթանալ Զանգեզոր կոնտակտային կենտրոնի լուծմանը, որն այսուհետեւ հնարավորություն է տալիս սպասարկելու ոչ միայն զանգեր, այլ նաեւ էլեկտրոնային նամակներ, SMS-ներ եւ սոցիալական մեդիայի հաղորդագրություններ: Buy.am օնլայն մոլի տաղավարում էլ այցելուներին կներկայացվեն գնումներ կատարելու նոր, հարմարավետ միջոցներ, ինչպես նաեւ հատուկ առաջարկներ գործընկերների կողմից:

Team ընկերությունների խմբի մասին

Team ընկերությունների խումբը միավորում է Team Telecom Armenia, Team Pay, Team Systems, Team Solutions CJSC, Buy.am, Grand Hotel Yerevan, TMW, Northern Terroir, Team Construct, Team Logistics, ServiceHUB ընկերությունները՝ գործունեություն ծավալելով հեռահաղորդակցության, SS, ֆինանսական, հյուրանոցային եւ մի շարք այլ ոլորտներում:

Team-ը ձգտում է խթանել տնտեսությունը՝ առաջարկելով այնպիսի պրոդուկտներ ու ծառայություններ, որոնք հասանելի եւ կիրառելի կլինեն բոլորի համար:

Հասարակայնության հետ կապերի բաժին՝pr@teamgroup.am

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 24.10.2025 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝30.12.2025թ.-ին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

. Լոտ՝ ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Նաիրի, գյուղ Պռոշյան, 3-րդ փողոց, 18-րդ նրբանցք, 24 հասցեում գտնվող 584,66 քմ բնակելի տուն, 15,9 քմ օժանդակ շինություն, 28,8 քմ լողավազան, 4,3 քմ սանհանգույց, 3,8 քմ օժանդակ շինություն, 9,1 քմ /22,75 խմ/ պարիսպ, 34,4 քմ ծածկ եւ 0,1035 հա հողամաս,

. Լոտի մեկնարկային գինը՝ 194000000 (Մեկ հարյուր իննսունչորս միլիոն) ՀՀ դրամ,

. Միջնորդավճար՝Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝Միջնորդավճար),

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

. ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

. իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը:

Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝www.llcbst.am, www.borsa.am.

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 18 պատահար, 1 մարդ մահացել է, 23-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԹԱՆԿԱՑՈՒՄ

Ոսկին արագորեն թանկանում է: Սա պայմանավորված է պաշտպանական ակտիվների նկատմամբ աճող պահանջարկով:

Comex բորսայում դեկտեմբերի ֆյուչերսները բարձրացել են 1.5%-ով՝ հասնելով 3965.4 դոլարի՝ մեկ ունցիայի դիմաց: Տարեսկզբից ոսկին արդեն թանկացել է մոտ 1.5 անգամ:

Ոսկու նկատմամբ պահանջարկը, որը համարվում է «ապահով ներդրում», շարունակում է բարձր մնալ՝ կապված ԱՄՆ կառավարության աշխատանքի կասեցման եւ Ֆրանսիայում քաղաքական ճգնաժամի հետ:

ԱՄՆ-ի պետական կառույցները դադարեցրել են աշխատանքը դեռեւս անցած չորեքշաբթի, քանի որ Կոնգրեսը չի կարողացել ընդունել ֆինանսավորման շարունակման մասին օրինագիծը:

Միեւնույն ժամանակ, երկուշաբթի օրը հայտնի դարձավ, որ Ֆրանսիայի վարչապետ Սեբաստյեն Լեկոռնուն հայտարարել է իր հրաժարականի մասին: Հրաժարականը պայմանավորված է նոր կառավարության կազմի քննադատությամբ:

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝ 2025թ. հունվար-օգոստոսին ՀՀ պետբյուջեի եկամուտները կազմել են 1,869 մլրդ դրամ: 2024թ. համադրելի ցուցանիշի համեմատ արձանագրվել է աճ 244.5 մլրդ դրամով կամ 15.1%-ով:

Միեւնույն ժամանակ, պետբյուջերի ծախսերը կազմել են 1,929 մլրդ դրամ, ինչը 2024թ. համադրելի ցուցանիշը գերազանցում է 12.9%-ով կամ 220.6 մլրդ դրամով: Ինչ վերաբերում է պակասուրդին, ապա այն նվազել է 23.9 մլրդ դրամով եւ կազմել 60.7 մլրդ դրամ:

2025թ.-ի օգոստոս ամսվա ցուցանիշներով, ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 207 մլրդ դրամ, ծախսերը՝ 206.9 մլրդ դրամ, իսկ պակասուրդը՝ 56.8 մլն դրամ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Ես՝ Տիգրան Աշոտի Մանուկյանս, 2003-2010 թթ. սովորել եմ ՀՊՃՀ-ում (Էներգետիկայի դեպարտամենտ, արդյունաբերական Ջերմաէներգետիկա), «ինժեներ» մասնագիտությամբ: Կորցրել եմ 2010թ. ինձ տրված, բակալավրի գիտական աստիճանս հավաստող դիպլոմը:

Դիպլոմի համար՝ AB 090407 (gr8452)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Ես՝ Պյոտր Արամի Հայրիյանս, 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախում եմ թողել Հայ-ռուսական համալսարանի կողմից տրամադրված իմ դիպլոմը: Այժմ ցանկանում եմ վերականգնել այն:

Դիպլոմի տվյալները - հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

- Հայրիյան Պյոտր Արամի
- բակալավրի գիտական աստիճան
- հայկական դիպլոմ : AB 267969 ռեգիստրացիայի համար՝ 4163,
- рус. диплом 117705 0716172 рег. номер 4170

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ» ՀԱՆՁՆԱՌՈՒ Է ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖՈՐՈՒՄ

2025 թվականի հոկտեմբերի 3–4-ին Ծաղկաձորում անցկացվեց Հայաստանի Հանքարդյունաբերական երկրորդ միջազգային ֆորումը: Ֆորումի նպատակն էր մեկ հարթակում համախմբել տեղական եւ միջազգային մասնագետների, պետական մարմինների ներկայացուցիչների, ներդրողների եւ փորձագետների՝ քննարկելու հանքարդյունաբերության զարգացման հեռանկարները, ներդրումային միջավայրը եւ կայուն զարգացման գլոբալ միտումները:

Ֆորումի միջազգային խոսնակները, ոլորտի հեղինակավոր փորձագետները ներկայացնում էին ավելի քան 8 երկիր:

Հոկտեմբերի 3-ին ֆորումի բացմանը մասնակցել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Հայաստանի հանքարդյունաբերության եւ մետալուրգիայի ասոցիացիայի նախագահ, ֆորումի գլխավոր հովանավոր, ԶՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանը փաստում է, որ ոչ մի այլ ոլորտ չի առաջարկում նույնչափ մեծ հնարավորություններ, որքան հանքարդյունաբերությունը:

«Պատասխանատու կառավարման արդյունքում այն կարող է դառնալ աճի եւ սոցիալական զարգացման հզոր շարժիչ ուժ՝ Հայաստանը վերածելով ծաղկող տնտեսության: Մեզ անհրաժեշտ է արդյունաբերություն, որը ոչ միայն տնտեսապես կենսունակ է, այլ նաեւ ժամանակակից, անվտանգ, պատասխանատու եւ ներառական: Հայաստանի հանքարդյունաբերական ֆորումի երկու օրերի ընթացքում կծավալվեն հենց այս հարցերի շուրջ քննարկումներ»,- ասել է նա:

Ֆորումի գլխավոր հովանավորներն էին Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը եւ «Լիդիան Արմենիա» ընկերությունը, հովանավոր՝ «Ամերիաբանկ»:

Բանկի կորպորատիվ հաճախորդների հետ հարաբերությունների բաժնի ղեկավար Էդուարդ Առաքելյանն էլ հավելեց՝ «Ամերիաբանկի» միջոցով միայն 5 հազար հոգի հանքարդյունաբերության ոլորտում գործող ընկերություններից աշխատավարձ է ստանում:

«Այդ հինգ հազար հոգին բանկում հանրագումարային ունեն մոտ 60 միլիոն դոլարի վարկեր՝ տարբեր նշանակության: Հանքարդյունաբերության ընկերությունները նաեւ կտրվածքով մոտ կես միլիոն դոլար գումար են փոխանցում Հայաստանում մոտ 3100 իրավաբանական անձանց: Այսինքն, այդքան մարդ ծառայություններ է մատուցում ոլորտին»,- ասում է նա:

Ֆորումի մյուս գլխավոր հովանավոր «Լիդիան Արմենիա» ընկերության գործադիր տնօրեն Հայկ Ալոյանը շեշտեց, որ այսօր աշխարհաքաղաքական փոփոխությունների եւ գլոբալ տնտեսական միտումների պայմաններում հանքարդյունաբերության հետագա զարգացումը եւ ոլորտում որակյալ ներդրումների ներգրավումը ռազմավարական նշանակություն ունեն մեր երկրի ապագայի համար:

«Այս առումով Հայաստանի հանքարդյունաբերական ֆորումը կարեւոր հարթակ է տրամադրում ոլորտի ապագայի շուրջ մասնագիտական երկխոսություն ծավալելու եւ զարգացման հնարավորությունները նախանշելու համար: Որպես ֆորումի գլխավոր հովանավոր՝ հպարտ ենք մեր ներդրումն ունենալ այս երկխոսության կայացման գործում»,- նշել է Ալոյանը:

Միջոցառման կայացմանը նպաստել են նաեւ գործընկեր կազմակերպություններ՝ ՔեյՓիէմՋի Հայաստան, «Կոմացույի» պաշտոնական ներկայացուցիչ Իկո մաշինների, ԲիԴիՕ Հայաստան, «Մենդիառեսորսիս», «Նորգեո», «Գրանթ Թորնթոն» Հայաստան:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

«ՍՈՖԹԿՈՆՍՏՐԱԿՏԸ» ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է DisruptHR ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

«Սոֆթկոնստրակտ» ընկերությունների խումբն օրերս հյուրընկալել է 7-րդ DisruptHR միջոցառումը «Tech Edition» խորագրով՝ հանդես գալով որպես հանդիպման գլխավոր գործընկեր: Միջոցառումն իրականացրել է Cascade People & Business ընկերությունը:

Միջոցառման ընթացքում մարդկային ռեսուրսների կառավարման 12 խոսնակներ ներկայացրել են արհեստական բանականության կիրառման հնարավորություններն ու նորարարական լուծումները կազմակերպությունների արդյունավետության բարձրացման գործում: Քննարկվել են նաեւ ԱԲ-ի ռիսկերն ու մարտահրավերները. կարո՞ղ է արդյոք արհեստական բանականությունն ամբողջությամբ փոխարինել մարդուն:

Cascade People & Business ընկերության հիմնադիր եւ գլխավոր տնօրեն Արփի Կարապետյանը նշել է, որ թեեւ թեման հաճախ է քննարկվում, բայց մնում է արդիական. «Մենք անցյալ տարի իրականացրել ենք միջազգային կոնֆերանսներ, որոնք նույնպես AI-ին էին նվիրված, կոչվում էր The Science of Leadership: Ծեծված թեմա է, այնուամենայնիվ, մենք պետք է հավաստենք, որ ամենաարդիականն է, որովհետեւ մենք բոլորս դրա մեջ ենք եւ չգիտենք՝ ուր ենք գնում»:

«ՍոֆթԿոնստրակտ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Լեոնիդ Կարապետյանն էլ հանդիպմանն անդրադարձել է գլոբալ ու տեղական հարթակների համադրման կարեւորությանը. «Խոսել եմ այն մասին, թե ինչպես կարելի է համախմբել խոշոր գլոբալ ընկերությունը՝ հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքն ու կապերը: Յուրաքանչյուր կազմակերպության համար կարեւոր մարտահրավերներից է համադրել գլոբալն ու տեղականը: «ՍոֆթԿոնստրակտը» գրասենյակներ ունի Սան Պաուլոյից մինչեւ Բուխարեստ, եւ մեզ համար առանցքային է, որ բոլոր աշխատակիցները գործեն որպես միասնական թիմ:

Մենք սրան նայում ենք որպես համակարգչային-օպերացիոն համակարգի, որն ունի միասնական Source Code (ելակետային կոդ) եւ API կամ տեղային ինտերֆեյսեր. այս մոտեցմամբ ընկերության տարբեր հատվածներ միացնում ենք իրար», - նշել է Լեոնիդ Կարապետյանը:

Նա նաեւ ընդգծել է, որ արհեստական բանականության գործիքակազմը կարող է կարեւոր դեր ունենալ Հայաստանի նման փոքր բնակչություն ունեցող երկրի համար. «Մենք պետք է ձգտենք լինել առաջատար այս ոլորտում, այլ ոչ թե պարզապես հետեւող»:

«ՍոֆթԿոնստրակտ» ընկերությունների խմբի ՄՌԿ տնօրեն Մարիա Կարապետյանը խոսել է ԱԲ-ի գործոնի մասին աշխատանքի ապագայի շրջանակներում. «Այսօրվա տեխնոլոգիական զարգացումների եւ AI-ի հետ հանդերձ մենք հաճախ մոռանում ենք մարդկային գործոնների եւ դրանց կարեւորելու, առաջ տանելու, մարդկային շփումն ավելի բարձր դասելու մասին», - ասել է Մարիա Կարապետյանը, ընդգծելով, որ ԱԲ-ն կարող է ամեն ինչ անել, բայց կա մի հստակ գործոն՝ մարդկայինը, որը փոխարինել հնարավոր չէ:

DisruptHR-ը ներկա եւ ապագա առաջնորդների համախմբմանն ուղղված շարժում է, որը միջազգային հարթակ է դուրս եկել՝ ընդգրկելով շուրջ 30 երկիր եւ 150-ից ավելի քաղաք:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼԸ» ԵՎ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿԸ» ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵՑԻՆ

Գ

• **«ՔոնթուրԳլոբալը» հաջողությամբ ավարտել է Հայաստանում եռեք հիդրոէլեկտրակայանների համալիրի 135 միլիոն ԱՄՆ դոլարի վերաֆինանսավորումը**

• Միջոցները կօգտագործվեն առկա պարտքի վերաֆինանսավորմանը եւ կապիտալի կառուցվածքի օպտիմալացմանը՝ 404 ՄՎտ հզորությամբ Որոտանի Կասկադի բարձր կատարողական չափանիշների պահպանման շարունակականության համար, որը կազմում է երկրի դրվածքային հզորության մոտ 12%-ը:

• Նշանակալից գործարքը վերջերս ամփոփվեց «Արդշինբանկի»՝ Հայաստանի խոշորագույն բանկի հետ համագործակցությամբ:

«ՔոնթուրԳլոբալը» հպարտությամբ հայտարարում է 404 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորություն ունեցող Որոտանի հիդրոկասկադի՝Որոտան գետի երկայնքով տեղակայված 3 հիդրոէլեկտրակայանների համալիրի 135 միլիոն ԱՄՆ դոլարի վերաֆինանսավորման հաջող ավարտի մասին: 120-ից ավելի նվիրված մասնագետներից բաղկացած թիմի կողմից շահագործվող Որոտանի հիդրոկասկադը հանդիսանում է Հայաստանի վերականգնվող էներգետիկ ենթակառուցվածքների հիմնաքարը:

Գործարքը, որն իրականացվել է Հայաստանի խոշորագույն բանկի՝ «Արդշինբանկի» հետ համագործակցությամբ, ծառայելու է ինչպես առկա պարտքի վերաֆինանսավորմանը, այնպես էլ կապիտալի կառուցվածքի օպտիմալացմանը: Այս գործարքը աջակցելու է «ՔոնթուրԳլոբալին» պահպանել երկրի էներգամատակարարման համար այս ռազմավարական ակտիվի բարձր չափանիշները:

Հայաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ էներգետիկ համագործակցության ամրապնդման եւ ընդլայնման համատեքստում, «Արդշինբանկի» եւ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի միջեւ կնքված համաձայնագիրը արտացոլում է այս միտումը եւ ընդգծում երկու կողմերի Հայաստանում կայուն, մաքուր էներգետիկ ենթակառուցվածքներ զարգացնելու համատեղ հանձնառությունը:

Վերջին տասնամյակի ընթացքում «ՔոնթուրԳլոբալը» ավելի քան 80 միլիոն ԱՄՆ դոլար է ներդրել Որոտանի հիդրոկասկադի արդիականացման մեջ՝ այն դարձնելով երկրի էներգետիկ անվտանգության հիմնաքարը: 2015 թվականի հունիսին ձեռք բերումից ի վեր, հիդրոէլեկտրակայանները մշտապես ապահովել են Հայաստանի էլեկտրաէներգիայի տարեկան մատակարարման մոտ 10%-ը եւ կազմում են երկրի ընդհանուր դրվածքային հզորության գրեթե 12%-ը՝ կարեւորագույն դեր խաղալով նաեւ ազգային ցանցի կայունության եւ հաճախականությունների կարգավորման գործում:

Այս նշանակալից քայլը «ՔոնթուրԳլոբալի» գլոբալ ֆինանսական ռազմավարության մի մասն է, որը կոչված է օպտիմալացնելու իր կապիտալի կառուցվածքը եւ ուղղորդելու ռեսուրսները վերականգնվող էներգիայի աճին: «Արդշինբանկի» կողմից ցուցաբերվող աջակցությունն ընդգծում է վստահությունը «ՔոնթուրԳլոբալի» բարձր չափանիշների եւ Հայաստանում մաքուր էներգիայի զարգացման երկարաժամկետ տեսլականի նկատմամբ:

Վերաֆինանսավորումը նաեւ տեղի է ունենում «ՔոնթուրԳլոբալի» համար նշանակալից տարում, քանի որ այս տարի «ՔոնթուրԳլոբալը» նշում է Հայաստանում իր գործունեության 10-ամյակը: Տեխնոլոգիական արդիականացումներից բացի, «ՔոնթուրԳլոբալը» նաեւ աջակցել է համայնքային նախագծերին, որոնք ընդգրկել են ավելի քան 120,000 շահառու, եւ ամրապնդել է կապերը Սյունիքի մարզի հետ՝ կրթության եւ երիտասարդության զարգացման նախաձեռնությունների միջոցով: Այս տասնամյակի ընթացքում կատարված ներդրումները վկայում են ընկերության երկարաժամկետ հանձնառության մասին՝ ուղղված Հայաստանի էներգետիկ զարգացմանը եւ այն համայնքների բարօրությանը, որտեղ ընկերությունը ծավալում է իր գործունեությունը:

Այս կարեւորագույն գործարքում ներգրավված են կառույցներ, որոնցից մեկը համակարգային նշանակություն ունի Հայաստանի բանկային հատվածի համար, իսկ մյուսը՝ հիմնարար նշանակություն Հայաստանի ամբողջ տնտեսության համար: Սա Հայաստանի բանկային համակարգի կողմից էներգետիկ ոլորտում իրականացված խոշորագույն ֆինանսավորման գործարքն է: Այն ցույց է տալիս է հայկական բանկերի կարողությունը՝ սպասարկելու եւ Հայաստանում խոշոր ամերիկյան ներդրողների կարիքները, եւ երկրի տնտեսության աճող ներուժը:

«ՔոնթուրԳլոբալի» մասին

«ՔոնթուրԳլոբալը», որը հանդիսանում է KKR-ի մաս, եւ ղեկավարում է գլխավոր գործադիր տնօրեն Անտոնիո Կամիսեկրան, անկախ էլեկտրաէներգիայի արտադրող միջազգային ընկերություն է (Independent Power Producer - IPP), որը ամբողջ աշխարհում կառուցում, ձեռք է բերում եւ շահագործում է էլեկտրաէներգիա արտադրող եւ կուտակող ակտիվներ: Ընկերությունը ներկայումս տնօրինում է 5.3 ԳՎտ դրվածքային հզորություն՝ ընդգրկելով տարբեր տեխնոլոգիաներ եւ ակտիվների կատեգորիաներ, եւս 1 ԳՎտ վերականգնվող էներգետիկ հզորություն գտնվում է զարգացման եւ կառուցման փուլում եւ շուրջ 9.8 ԳՎտ՝ նախագծման փուլում: Ընկերության գործունեությունը ընդգրկում է 18 երկիր՝Եվրոպայում, Աֆրիկայում, Ասիայում, ինչպես նաեւ Հյուսիսային եւ Հարավային Ամերիկայում: «ՔոնթուրԳլոբալը» պարտավորվել է արագացնել իր պորտֆելի ածխազերծման գործընթացը (decarbonization)՝իրականացնելով կայուն անցում ջերմային ակտիվներից՝ վերազինելով գործող վերականգնվող էներգետիկ ակտիվները եւ զարգացնելով նոր վերականգնվող էներգետիկ նախագծեր:

«ՔոնթուրԳլոբալը» 20 տարվա ընթացքում ձեւավորել է ամուր համագործակցություն համայնքների, պետական կառույցների եւ հաճախորդների հետ, որոնք օգտվում են ընկերության մատակարարվող էլեկտրաէներգիայից՝ երկարաժամկետ պայմանագրերի կամ նորարարական գնման համաձայնագրերի միջոցով՝համադրված էլեկտրաէներգիայի կառավարման լուծումներով:

«Արդշինբանկի» մասին

«Արդշինբանկը» Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: «Արդշինբանկն» ունի շուրջ 570.000 հաճախորդ, որոնց սպասարկում են բանկի 2300-ից ավելի աշխատակիցներ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 72 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ եւ օնլայն բանկինգի համակարգերով:

Բանկն ունի երկրում ամենալայն մասնաճյուղային ցանցը, ինչպես նաեւ ներկայացուցչություն Փարիզում: «Արդշինբանկը» Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

Telcell-ի ԵՎ «Koreez»-ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԻՎ ԸՆԴԼԱՅՆՎԵԼ Է ՄՐՑՈՒՅԹԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գ

Հայաստանում վճարահաշվարկային ոլորտում թվային տեխնոլոգիաների առաջատար Telcell ընկերությունն 2025 թվականից հանդիսանում է Koreez կրթական նախագծի գլխավոր գործընկերներից, ինչը հնարավորություն է ընձեռել մաթեմատիկական մրցույթին ընդգրկելու տասնյակ հազարավոր աշակերտների Հայաստանից ու Սփյուռքից:

Ուսուցչի օրը՝ հոկտեմբերի 5-ին, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ Հայաստանի ամենամեծ կրթական շոու-մրցանակաբաշխությունը՝ «Koreez 2025»-ը, որով ամփոփեցին տարվա ընթացքում անցկացված մի շարք մրցույթների, այդ թվում՝ «Koreez-Telcell-ֆիզմաթ»-ի արդյունքները:

Telcell ընկերության գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանի խոսքով՝ Koreez կրթական նախագծի համագործակցությունը սկիզբ է առել ավելի վաղ՝ մինչ պաշտոնական գործընկերության հաստատումը:

«Telcell ընկերության համար կրթությունը եւ ընդհանրապես կրթական նախագծերին աջակցելը եղել եւ մնում է մեր սոցիալական պատասխանատվության կարեւոր բաղադրիչներից մեկը եւ, հատկապես, խիստ կարեւորում ենք դպրոցական, կրթական ոլորտներում մեր ներդրումն ունենալու հնարավորությունը, ինչն ընձեռեց Koreez-ը: Կարծում եմ, որ այս համագործակցությունը շատ լավ, կարելի է ասել, կրկին մեկնարկ է, որը ժամանակի ընթացքում իր արդյունքները ցույց կտա: Միգուցե դա կլինի ոչ առաջիկա մեկ-երկու տարիներին, բայց երբ այս երեխաները դառնան լավ մասնագետներ, արժեք ստեղծեն մեր պետության համար, այս օրվա համար մենք կհպարտանանք»,-ասաց ընկերության գլխավոր տնօրենը:

«Koreez-Telcell-ֆիզմաթ» մրցույթը բաղկացած է օնլայն եւ օֆլայն փուլերից, որի հաղթողները, բացի արժեքավոր նվերներից, ամեն տարի հնարավորություն են ստանում արտոնյալ պայմաններով ընդունվելու Երեւանի Արտաշես Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոց:

Koreez կրթական ծրագրի հիմնադիր Սուրեն Ալոյանը ֆանտաստիկ տոն համարեց այս տարվա մրցանակաբաշխությունը՝ նշելով, որ արդեն երկրորդ տարին է, ինչ Telձell ընկերության հետ միասին իրականացվում է մաթեմատիկական համընդհանուր տոն-մրցույթ:

«Մենք միասին հաջողեցինք տասնյակ հազարավոր աշակերտների մեջ սեր խթանել մաթեմատիկայի հանդեպ: Այսօր հանրապետության 10 մարզերի եւ Երեւանի շուրջ 1184 դպրոցների տասնյակ հազարավոր աշակերտներից այստեղ են եկել մաթեմատիկայի լավագույններից լավագույնները»,-նշեց Ալոյանը:

Որպես առաջադեմ ու հաջողության ուրույն բանաձեւն ունեցող ընկերություն, Telcell ընկերությունը համոզված է, որ կրթությունն ու գիտելիքը մնայուն կապիտալ է, իսկ հաջողության ճանապարհը սկսվում է կրթությունից:

Այս տեսլականով՝ ընկերությունն իր ներդրումն է բերում Հայաստանի եւ Սփյուռքի հազարավոր հայ երեխաների համար կրթական, մասնավորապես՝ մաթեմատիկայից գիտելիքների ձեռքբերման գործընթացի խթանմանը:

«Որպես առաջադեմ ընկերություն՝ Telcell-ի ղեկավար կազմը, առաջնորդները հավատացած են, որ հաջողության մոտ 80 տոկոսը դա կրթությունն է, գիտելիքն է եւ շարունակական հավատը դեպի քո առաքելությունը: Մենք միասին միավորվեցինք, որպեսզի կարողանանք այս տոնը համահայկական ու մասշտաբային դարձնել: Համագործակցության շնորհիվ՝ այն արդեն դուրս է եկել Հայաստանի սահմաններից. մեզ են միացել 40-ից ավել երկրներում ապրող սփյուռքահայ երեխաներ: է Telcell ընկերության այդ մեծ հովանոցը, հնարավորություն տվեց, որպեսզի մենք կարողանանք թակել յուրաքանչյուր ընտանիքի դուռ եւ ասել, որ մաթեմատիկան կարող է հասանելի լինել յուրաքանչյուր երեխայի»,-հավելեց Koreez-ի հիմնադիրը:

Մրցանակաբաշխության արարողությունը մեկ հարկի տակ էր համախմբել «Իմ ընկեր Ալենը» ընթերցանության մրցույթի, ինչպես նաեւ «Կորիզ առարկայական» եւ «Koreez-Telcell-ֆիզմաթ» մրցույթի լավագույն մասնակիցներին:

Յուրաքանչյուր անվանակարգում առաջինից երրորդ տեղերը զբաղեցրած 3-12-րդ դասարանի 10-ական աշակերտ արժանացավ գլխավոր, իսկ շուրջ 300 մասնակից՝խրախուսական մրցանակների:

«Koreez-Telcell-ֆիզմաթ» մրցույթի մասնակից, Երեւանի Հ. 118 ավագ դպրոցի շրջանավարտ Շուշան Ալեքսանյանը կարեւորեց մասնակցությունից ստացած փորձն ու դասերը:

«Մաթեմատիկայի հանդեպ իմ սերը մեծ է: Մրցույթի մասին եղբորիցս եմ իմացել ու մասնակցել: Հարցերը շատ հետաքրքիր էին կազմված: Խորհուրդ կտամ ընկերներիս, որ մասնակցեն, իսկ ես իմ աջակցությունը կունենամ նրանց մասնակցությունը խթանելու համար»,-ասաց մրցույթի մասնակիցը:

Մրցանակաբաշխությանը արժեքավոր նվերներով պարգեւատրվեցին նաեւ հաղթող աշակերտների ուսուցիչները, տնօրենները ու դպրոցները:

Երեւանի Դերենիկ Դեմիրճյանի անվան Հ.27 հիմնական դպրոցի փոխտնօրեն Գայանե Ավետիսյանը ողջունեց Koreez-ի եւ նրա գործընկերների կողմից իրականացվող աշխատանքը:

«Հիանում եմ այդ աշխատանքներով, որովհետեւ երեխաներին այնպիսի աշխատասիրություն, նպատակասլացություն է հաղորդում, որ ուղղակի բառերով պատմել անհնար է: Ցանկանում եմ, որ երկար ճանապարհ անցնի եւ մեր հանրապետության երեխաներից բացի ընդգրկի աշխարհով մեկ սփռված հայ համայնքներում գտնվող աշակերտներին»,-ընդգծեց փոխտնօրենը:

«Koreez -Telcell-ֆիզմաթ» մրցույթի գլխավոր մրցանակակիրները պարգեւատրվեցին, պլանշետներով, նոթբուքերով, ականջակալներով ու սմարթֆոններով:

Մրցանակաբաշխությունն ուղեկցվեց տոնական շքեղ համերգային ծրագրով, որն ամփոփվեց Koreez-ի հիմներգով:

● *Հոկտեմբերի 10-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Երեք ընկեր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-6.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՄԱՔՍԱՅԻՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կազմակերպվում ժամանակավոր ներմուծված թեթեւ մարդատար ավտոմեքենաների մաքսազերծման պետական աջակցության ծրագիրը:

Երվանդ Մուրադյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար Հայաստան ժամանակավոր ներմուծված՝ ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող թեթեւ մարդատար տրանսպորտային միջոցների մաքսազերծման համար պետական աջակցության ծրագրից օգտվող քաղաքացիները պետք է վճարեն միայն իրենց հասանելիք մաքսատուրքի չափը: Պետության կողմից մասնակի փոխհատուցումն իրականացվում է միանգամից:

Այսինքն, մինչեւ 5 տարի թողարկման տարեթիվ ունեցող ավտոմեքենաների մասով շահառուն վճարում է մաքսազերծման գումարի միայն 60%-ը, իսկ 5 տարուց ավելի թողարկման տարեթիվ ունեցող ավտոմեքենաների մասով շահառուն վճարում է միայն 30%-ը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող թեթեւ մարդատար ավտոմեքենաների մաքսային ձեւակերպումների ժամանակ կատարվում է միագումար մաքսային վճար (անկախ ավտոմեքենայի տարիքից) եւ բնապահպանական հարկ (եթե ավտոմեքենայի տարիքը մեծ է 5-ից): Միագումար մաքսային վճարի չափը մինչեւ 3 տարեկան ավտոմեքենաների համար կախված է ավտոմեքենայի արժեքից եւ շարժիչի ծավալից, իսկ 3 տարեկանից բարձր ավտոմեքենաների դեպքում՝ բացառապես շարժիչի ծավալից: Բնապահպանական հարկի չափը կախված է ավտոմեքենայի տարիքից եւ արժեքից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՀԱՐՑ. Ովքե՞ր պետք է 2024 թվականի հաշվետու տարվա համար 2025 թվականին ներկայացնեն եկամուտների հայտարարագիր, եւ արդյո՞ք պետք է հայտարարագիր ներկայացնեմ, եթե 2024 թվականին աշխատել եմ մի քանի ամիս:

Ռիմա Ասլիբեկյան (56 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե Դուք ՀՀ ռեզիդենտ Հայաստանի Հանրապետության քաղաքացի եք եւ 2024 թվականի ընթացքում եղել եք վարձու (աշխատանքային պայմանագրի համաձայն) աշխատող կամ աշխատել եք քաղաքացիաիրավական պայմանագրով եւ դրա շրջանակում ստացել եք եկամտային հարկով հարկվող եկամուտ կամ նախորդ տարի՝ 2023 թվականի հաշվետու տարվա համար ներկայացրել եք հայտարարագիր, ինչպես նաեւ ներառված եք 2025 թվականին հայտարարագիր ներկայացնողների մյուս խմբերում, ապա, այո, այս տարի պետք է ներկայացնեք եկամուտների տարեկան հայտարարագիր:

Դուք պետք է ներկայացնեք հայտարարագիր անգամ այն դեպքում, երբ 2024 թվականին աշխատել եք ընդամենը մեկ ամիս, ընդ որում, հայտարարագիրը պետք է ներկայացնեք ամբողջ տարվա համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե 2024 թվականին, 2023 թվականի հաշվետու տարվա համար ներկայացրել եք հայտարարագիր, ապա այս տարի եւս պետք է ներկայացնեք հայտարարագիր, անգամ այն դեպքում, երբ 2024 թվականի ընթացքում չեք աշխատել կամ հայտարարատու չեք մյուս բոլոր հիմքերով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Թերեւս սուպերմարկետի աշխատակիցներին պետք է հորդորել արագագրություն չանել նման դեպքերում: Հակառակ պարագայում կհայտնվեն այսպիսի անհարմար իրավիճակում: Քաղաքացիները նկարում են «զվարճալի» գրությունը (որի անունը, ի դեպ, շոռակարկանդակ է) եւ հրապարակում այն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 2 + 6 +16 + 20
	Կոտայքի լեռներ	+ 2 + 4 +17 + 21
	Կոտայքի նախալեռներ	+ 6 + 9 +20 + 23
	Գեղարքունիք	+ 1 + 5 +16 + 19
	Լոռի	+ 2 + 6 +16 + 19
	Տավուշ	+ 4 + 12 +21 + 24
	Արագածոտնի լեռներ	+ 2 + 4 +17 + 19
	Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 10 +21 + 24

	Արարատ	+7 + 11 +22 + 26
	Արմավիր	+ 6 + 10 +22 + 26
	Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +17 + 19
	Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +21 + 25
	Սյունիքի հովիտներ	+ 9 + 13 +22 + 26
	Սյունիքի նախալեռներ	+ 5 + 8 +18 + 21
	ԼՂՀ	+ 9 + 12 +22 + 25
	Երեւան	+11 + 13 +19 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.10.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*